

Ո Ս Կ Ի Ո Ի Ռ Ն Ա Կ Ը

(ԽՈՐՀՈՒՐԴ)

(Կործանած մեհեաւերի մը բակը: Մէյ-
մէկ սիւնի տուած իրենց կռնակը, երեք կի-
ներ, առջեւնին հողի ամաններով):

Բ. ԿԻՆԸ (Ա. ԿԻՈՋ)

Ըսէ, իմ թո՛յր,
Ի՞նչ է տեսածդ ամանին
Տփոյն բոցին:

Ա. ԿԻՆԸ

Ես կը տեսնեմ
Ոսկի փողին անցեալներուն:

Բ. ԿԻՆԸ

Ոսկի փողին անցեալներուն
Թափէ, կոտրէ: Ատենն անցած
է անցեալին:

Ա. ԿԻՆԸ

Դուն կ'ըսե՛ս առ, խելառ իմ թոյր:
Խորն այս պատիկ հող ամանին,
Կը քնանան հազար ամեր:

Բ. ԿԻՆԸ

Տասը հազար կանգուն օրօր
Երգէ երկար որ չարթնանա:

Ա. ԿԻՆԸ

Կարճ նայուածքդ է, խելառ իմ թոյր,
Ջրբարկանաս:

Բղուղն այս խեղճ օր մը երկիրն
էր պապերուդ:

Կեցիր խառնեմ մոխիրը ջերմ:

(Կը խառնէ. բոցեր կը բարձրանան).

Տեսա՞ր, տեսա՞ր, ալիքն այս մեծ,

— Կայծակ ողկոյն հողիներուն

Այն պապերուն

Որոնք հեծած նժոյգ հուրէ

Հեղեղեցին ինչպէս փողի

Թշնամիին բանակն անբաւ,

Արտաբսելով

Հայրենիքին սահմաններէն:

Կը հասկնա՞ս:

Բ. ԿԻՆԸ

Ուրի՞շ:

Ա. ԿԻՆԸ

(Նորեմ կը խառնէ մոխիրը)

Ահա քեզի ուրիշ ալիք,
Առատութեան ու բարիքի,
Կաթի, մեղրի ու գինիի,
Ծոցէն ոսկի
Ամենազգաստ Անահիտին,
Վրան հողին այն պապերուն
Ազատ, հպարտ ու երջանիկ:
Կը հասկնա՞ս:

Բ. ԿԻՆԸ

Ուրի՞շ:

Ա. ԿԻՆԸ

(Նորեմ կը խառնէ)
Ծով է փառքի, յաղթանակի
Այն օրերէն, ալիքն այս բոց.
Երբ աստուածներն
էին մեզի խնամարկու:
Շէն ու հարուստ դարերն երկար
Ազատութեան,
Կը քնանան, քոյր իմ, հիմա.
Անցիր ճամբադ:
Լաւ է լըռել ու չխառնել,

Բ. ԿԻՆԸ

Ի՞նչ բան.

Ա. ԿԻՆԸ

Մոխիր, մոխիր, անցիր անդին,
Քու թակոյկին,
Ան քեզ կ'ըսէ
Թէ ի՛նչ կ'արժէ
Արեւմուտքէն ու հարաւէն
Բռնի բերուած Երբայեցի
Աստուածը նոր:
Անցիր քեզի . . .
Ի՞նչ կը տեսնես:

Բ. ԿԻՆԸ

(Մոխիրը խառնելով)
Այ քեզի սեւ, այ քեզի մուխ.
Կայրի շքեղ երկիրն Հայոց:
(Յանկարճ կարմիր բոց)
Այ քեզ արիւնն եղբայրներուն:
Մեհեալներու սուրբ յատակին
Անարգօրէն փողոտուեցան
Հազարներով,
Սեւեր հազած մարդոց սուրէն,
Խաղաղութեան ու ողբոյնի
Ու համբոյրի ու ծափի մէջ:
(Կը խառնէ մոխիրը)
Սեւ, սեւ ծուխն է Մեհեալներուն,

Մեծ արծառնին Ոսկիամօր :

(Կը խառնէ մոխիրը)
Ու դեռ, արիւն է ամէն գիւ.

Եղբայրն եղբօր,

Հայրը՝ տղուն

Մայրն աղջկան

Դէմն է, կ'ելլեն.

Կը բզկտեն զիրար սուրով,

Եղունգներով, ատամներով :

Կործանումն է հոգիներուն :

(Կը խառնէ մոխիրը)

Նայէ, իմ քոյր

Սոֆն է բացած կլափն անհուն

Որ կը շրջի, կը զալարուի,

Վըրան պարարտ արօտներուն

Անդաստանին :

Պիտի պակսին կաթն ու գինին

Հացն ու երէն.

Պիտի չորնան յորդ ըստինքներն

Աղբիւրներուն.

Արտը դառնայ երկանաքար

Արօրին տակը բանուորին :

Գ. ԿԻՆԸ

Քոյր իմ, որբան բառերդ են սեւ.

Բ. ԿԻՆԸ

(Խառնելով)

Քոյր իմ, շղթայ, տես, կը զարնեն

Նախարարին, թագաւորին,

Ազատներուն, տիկիներուն :

Բազաք, զիւղեր, շէն, աւաններ

Մեծ ու պզտիկ, տես, կը վարուին

Երկրին քոյր սահմաններէն

Դէպ շուկաները վաճառքին.

Դերի, գերի :

Քոյր իմ, գիտցիր, այս գեղեցիկ

Հայրենիքէն

Աւեր միայն պիտի գտնեն

Իմ զաւակներ :

Հեղինա՞կը այս չարիքին.

Բռնի բերուած Աստուածը նոր

Երբայցի,

Արեւմուտքէն ու հարաւէն :

Անցիր ճամբուդ, մ'երթար անդին,

Դուրս, Մեհնանին շրջափակէն :

Ա. ԿԻՆԸ

(Գ. Կնոջ մօտենալով)

Իրա՞ւ կ'ըսէ քոյրը մերին.

Գ. ԿԻՆԸ

(Կը խառնէ մոխիրը, խաղաղ ու պայծառ
Իրաւ չըսեր կինը երբեք՝ [ոյս])

Տարիքն անոր երբ որ ունի :

Ա. ԿԻՆԸ

Երիտասարդ դուն կ'երեւիս,
Ի՞նչ կը տեսնես թակոյկէդ ներս :

Գ. ԿԻՆԸ

Ուրիշ աղուոր, քաղցր բաներ :

Ա. ԿԻՆԸ

Չարի՞քն հապա՞ սա վայրերան

Գուշակողին :

Գ. ԿԻՆԸ

(Խառնելով)

Գրուած չարիքն է միշտ մարդուն,

Բայց կայ թաղուած խորն այս մոխրին

Ան որ վեր է միշտ չարիքէն :

(Կը խառնէ)

Տես ի՞նչ կապոյտ, տես ի՞նչ կարմիր

Կ'ելլեն թեւերն ալիքներուն :

Ապառնիին ընդերքներէն :

Ա. ԿԻՆԸ

Դուն կը տեսնե՞ս մեզմէ անդին :

Գ. ԿԻՆԸ

Ես կը տեսնեմ ձեզմէ անդին.

Դիտցիր, քոյր իմ, մէկիկ մէկիկ

Բոյլերն այս վառ,

Հոգիներն են որ պիտի գան

Հայ ժողովուրդը հովուելու :

Որը Արքայ, որն Հայրապետ,

Որը վկայ, որն իմաստուն,

Որը ռամիկ, որը փարթամ

Իշխանազուն :

(Խառնելով)

Շարան, շարան, սուրբերն հօզօր

Երէջ, զինուոր կամ զօրավար

Սաստիկ որոնք մահուան կրնան :

Հեղինա՞կը այս սուրբ հունձքին

— Այն որ կուգայ :

Աստուածն իրաւ, որ մեզ համար

Մահն յանձն առաւ.

Այսպէս կ'ըսեն բոցերն այս սուրբ

Իմ մեծ քոյրեր :

(Տեսադրամը կը մթնէ. կ'անեմեռնաւ
կիները: Օրք կ'ապոյտ լոյսը կը դառնայ,
մօտէն, ձայնը Սուրբին):

ՍՈՒՐԲԸ

Ըլլայ ըլլայ բարեբանեալ
Անունն անեղ մեր Աստծոյն
Յաւիտեանէ մինչ յաւիտեան:

(Կը մեծն բեմ: Ինքնամոլաւ: Խաբխաբուն:
Աշխարհը վնասելով գլխուն վերել բան
մը)

Տէ՛ր, կը վարես ոտներն իմ խեղճ
Ճամբովը սուրբ խորհուրդներուդ:
Ես չեմ տեսներ... .

Յոգներ մաշեր եմ քալելէն:
Աստղդ ինծի լուռ առաջնորդ
Որ կ'անգ առաւ:

Գ. ԿԻՆԸ

Հիւսուին կողերն աշուններուդ,
Եթէ այդպէս կ'ուզէ ընգմէ
Աստուածը որ կ'առաջնորդէ
Քու քայլերուդ:
Հանգչէ, սուրբ մայր,
Երկիրն ամբողջ կը զոդդողայ
Դեռ յուզումէն:

(Սուրբը կը նստի: Կը խոնարհէ գլուխը քա-
րին: Հով, օտուկ բեմի ետեւէն կ'եթ մը
մեծ լոյս որուն մէջ քեւեր, գլուխներ):

ԽՄԲԵՐԳԸ

Ալէլուիա, ալէլուիա:

ՍՈՒՐԲԸ

(Քունին մեղէն)
Ի՞նչ ծայն է այս... .

(Լուսին: Սուրբը կը խոնարհէ գլուխը
քարին: Լոյսը կը մեծնայ: Ամբողջ յե-
սամասը բեմին բարձունք մըն է ուր կը
քաւալին քեւերը, գլուխները պարուա-
ձեւ Եւրոպայի ճակատները):

ԽՄԲԵՐԳԸ

Յոյս, յարութիւն հոգիներուն,
Մարդոց դժբախտ որդիներուն:
Զի Տէ՛րն անա ելեր այցի
Ժողովուրդին իր սիրելի.
Ալէլուիա... .:

ՍՈՒՐԲԸ

(Հազիւ գլուխը բաժնելով քարին)
Ձայներ կուգան երկինքներէն.
(Նորէն կը հակէ գլուխը քարին)

ԽՄԲԵՐԳԸ

Փառք եւ պատիւ եւ օրհնութիւն
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն:
Ալէլուիա... .

(Բեմին առաջամասը կը սեւնայ, կը խորա-
նայ ու կը պատռի: Կ'երեւին գլուխներ,
մերկ, սեւ իրաններ):

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Անէժք, անէժք ու նախատինք
Բիւր այն մարդուն,
Հայրն է որուն
Արքայապան:

ՍՈՒՐԲԸ

(Յնգուած)
Ի՞նչ ծայն է այս... —
Ո՞ւրկէ կուգայ:
(Կրկին քմեմ):

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Պիտի փշրին փաստերն իր պիղծ
Ու խորտակուի՝ մարմինը քարշ... .

ԽՄԲԵՐԳԸ

Պիտ' օրհնուի բերանն իր սուրբ
Ու պաշտպանուի գործն իր հօգոր... .

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Պիտի ինչայ փառքն իր խախտաւ
Անծէն առաջ: Ըլլայ ծանակ
Յիշատակն իր
Դարէ ի դար:
Մարդը մղեց հողն ատելու,
Արհամարհել աշխարհն իրաւ
Սուտ ստուերի մը փոխաբէն... .

ԽՄԲԵՐԳԸ

Պիտի յիշուի անունն անոր
Հազարամէ մինչ հազարամ
Որ ժողովուրդն իր պատեց
Սանդարամետէն... .:

ՍՈՒՐԲԸ

(Ոսի, վերացած)

Ինքն է, Աստուած իմ երկնաւոր...

Աստեղակուռ ճամբէն ի վար

Ահա կ'իջնէ:

ԽՄԲԵՐԳԸ

Բացուին առջին գուռն ու սահման

Երկինքներուն:

Թագաւորն է, կ'իջնէ փառքի,

Այցելելու ժողովուրդին...

Ալէլուիա...

ՍՈՒՐԲԸ

Ինքն է, ինքն է

Տէրը երկրին, երկինքներուն:

Երկիրն Հայոց սփոփելու:

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Վիրապն աւրած է աչքն անոր,

Մի հաւատար

Իր տեսածին ու լսածին:

Նոր Աստուծոյ սուտ մարգարէ

Որ կործանէ պիտի այսպէս

Երկիրը ձեր

Ինչպէս Հայրն իր, որ սպաննեց

Ձեր թագաւորը բազմայաղթ,

Խոսրովը մեծ:

ԽՄԲԵՐԳԸ

Ան որ կուգայ, կուգայ խաղաղ

Ձեր սիրտերուն,

Ցօղն առտուան կ'իյնայ ինչպէս

Բաժակին մէջ

Ծաղիկներուն:

Թագաւորն է ան որ կուգայ

Արեւներուն ու սիրտերուն:

ՍՈՒՐԲԸ

(Բազկաստաւ)

Տէր բարեգութ ու մարդասէր,

Տուր մեզ տեսնել

Աստուածութեանդ անբաւելի

Փաստն անաւոր:

Քեզի դարձող ժողովուրդիդ

Այլին պարզէ տեսիլը սուրբ

Անժուժելի

Քու պատկերին:

Տէր բաց մեզի

Խորհուրդն անեղ

Քու տեսիլքիդ:

(Լուսփիւն: Հրեշտակներու օրհներգը)

ԽՄԲԵՐԳԸ

Մեծ սէրն անոր

Քան տիեզերքն է մեր վրան,

Ու մեր ներքին:

Ան կը գլխայ մարդոց բոլոր:

(Լուսփիւն կրկին: Խուլ կարծր ձայներ սան-
դարամետին)

ԹՍՈՒՍ

(Ամպի մը մեջէն պարզուելով)

Խաղաղութիւն եւ օրհնութիւն

Իմ ծառայիս:

Հասաւ խնդրանքդ իմ Հօր Գահուն.

Կուգամ ղնել հիմն անասան

Եկեղեցւոյ,

Հոն ուր դարեր մեղքին տունն էր

Որ կը տիրէր:

(Վեռի ուռնակով կը զարնէ քարին ու կը
փռուի)

Ահա փշուր ժայռն է մեղքին:

Դիր, իմ ծառաս, հիմն անասան

Ժայռի սրտին,

Հայաստանեայց Եկեղեցւոյ,

Հիմը որուն ուռնակն ոսկի

Երկինքներէն աշխարհ բերուած

Կը հաստատէ:

Խաղաղութիւն եւ օրհնութիւն:

(Ամպ կը բանձրանայ եւ կը ծածկէ Յիսուսը)

ԽՄԲԵՐԳԸ

Համբարձէր իշխանը զդրունս ձեր ի վեր

Համբարձին դրունը յաւիտենից

Եւ մտցէ թագաւոր փառաց

Ալէլուիա, ալէլուիա:

(Լոյս է: Լուսփիւն է: Բոլոր իջած են ծուն-

կի: Շեփոհն ձայն կը մօտենայ: Խօսակ-
ցութիւն: Թագաւորը կը մօտէ բեմ, հե-
տեւորներ)

ԹՎԳԱԻՈՐԸ

(Տեսնելով սուրբը բազկաստաւ, աղօթի,

կը մօտենայ ու կը համբուրէ անոր ոտքի
փոսին)

Կատարուած է պատգամըդ, Հայր,

Կայրին վրան Հայոց երկրին
Մեհեանները պիղծ բուրմերուն,
Քար չմնաց թարի վրայ,
Բոցը կերաւ կուռքերն ոսկի:

ՍՈՒՐԲԸ

Մարդերը:

ԹԱԳԱՒՈՐԸ

Եղան որ դուրս չելան շէնքէն
Ու եփեցան կրակին մէջ,
Եղան որ սուր ալ վերցուցին
Վրան զօրքին:
Բայց հալեցան
Թեւերն անոնց ոստի նման
Կրակին դէմ:

Հայր, պարտուած

է թշնամին:

Ամէն կողմէ ուրախութիւն

Ու աղաղակ...

Բայց չես խօսիր Հայր,

Հայր իմ սուրբ:

ՍՈՒՐԲԸ

Դուն չես գիտեր դեռ աւելին:

ԹԱԳԱՒՈՐԸ

Ի՞նչ է, ի՞նչ է որ չեմ գիտեր

Խօսէ Հայր իմ

Ով, Հայր իմ սուրբ:

ՍՈՒՐԲԸ

Ոսկի ուռնակն է տես, գետնին,

Ով Թագաւոր,

Այս ալ փշուր ժայռը որուն

Զարկաւ վերէն

Իջնող Արքան:

ԹԱԳԱՒՈՐԸ

Ոսկի ուռնակ, իջնող արքայ,

Զեմ հասկնար, խօսէ Հայր Սուրբ:

ՍՈՒՐԲԸ

Ըսաւ, հիմն է հոս, սա ժայռին

Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Ոչ դժոխքին ուժերը բիրտ

Ոչ ալ մաշումը դարերուն

Պիտի կրնան ազդել ուժին

Ու ամրութեան քու տաճարին:

Սն, զաւկները Հայաստանեայց

Եկեղեցւոյ,

Բերէք թարը սուրբ անկիւնին

Շինենք շէնքը

Այնպէս հաստատ, այնպէս ամուր

Որ դարերը զան փշրուիլ

Անտր սեմին:

(Սուրբ կ'իջնէ աղօթքի: Շեփո)

ԹԱԳԱՒՈՐԸ

Հեռեւեցէք:

(Կը ձգեն բեմը ու կիսալոյս է. խորին Սուր-

բին դէմքը, կ'աղօթէ: Աղմուկ, ձայներ:

Թագաւորը եւ հետեւողները)

Բերինք ինչ որ ուզեցիր, Հայր:

(Շալակէն կ'առնէ վառ ֆար)

ՍՈՒՐԲԸ

(Ոսկի ուռնակը ձեռքին, զարնելով ֆարին)

«Էջ Միածինն ի Հօրէ»

Եւ լոյս փառաց

Ընդ նմա.

Ձայնք հնչեցին

Սանդարամետը

Անդրնդոց».

(Կը դուռի առաջին ֆարը)

ՍՈՒՐԲԸ

Եկայք, շինեսցուք

Սուրբ ըզխորանն

Լուսոյ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր .

Յ. ՕՇԱԿԱՆ

